կիրը, վերադարձան լեռները՝ հարուստ աւարով և կողոպուտով։ Որպէս զի ամրափակուի իրենց տիրապետութիւնը աւերից յարձակումներից՝ Էէխրասիբ շահը հրամայեց, որ Դաղստանի սահմանում առատ ջուր և առողջարար օդ ունեցող բարձրաւանդակ տեղում շինուի բերդ և պահուի զօրք, որպէս զի միշտ պատրաստ լինի դիմադրելու լեռնականների վնասակար յարձակումներին. շահի կամքը կատարուեց. փորձուած ճարտարապետները (մուխդանտիսի) կանչուած այդ նպատակի համար, ընտրեցին տեղը, որը համապատասխան էր վերոյգրեալ բոլոր պայմաններին, ուր և կառուցին բերդը, որ և անուանեցաւ Նարինջ-Կալայ . . . ։ Բերդի հիմնարկութիւնից 100 տարի յետոյ Էէխրասիբ շահը մեռաւ. զա՝ հի ժառանգ եղաւ նորա որդի Գէշտասիբ շահը (Վշտասպ)։

Գ. 3. «Դարբանդի առողջ օդը պատճառ եղաւ ամեն հեռաւոր կողմերից մարդիկ ընտանիքներով գաղթել այն տեղ և բնակուել նորա պարիսպների շուրջը։

Է. 6. «Նէման՝ Էգջուրդ Իրանի թագաւորի նախարարը կռապաշտ էր . . . ասաց իւր վէզիրին ցոյց տուր ինձ որ և է յաւիտենական բան. վէզիրը, որ ծածուկ քրիստոնեայ էր, պատասխանեց. յաւիտենական այգին, պարտէզը, դրախտը ոչ մի կերպով չէ հասնում մարդոյն՝ բացի հաւատով առ Հոգին Աստուծոյ. այս խօսքերը այնպէս խիստ ներգործեցին Նէմանի վրայ, որ նա այն իսկ տեղումը ընդունեց Յիսուսի հաւատը։ Յետ այնորիկ Նէմանը թողեց հարստութիւնը ընտանիքին և ճանապարհ ընկաւ։ Անցնելով շատ քաղաքներ և նահանգներ հասաւ Դէրբէնդ, որի բնակիչները մինչ այն ժամանակ պաշտում էին կրակին, ընդունեցին նրանից Քրիստոնէութիւն։ Այս եղաւ 355 թուին Քրիստոսի յարութիւնից յետոյ։

Թ. 7. . . . «Նուշիրվանը (Խոսրով պարսից թագաւորը) տեղեկութիւն ստացաւ, որ Խէյատլէ ազգի իշխանաւորները անթիւ զօրքերով անցան Քարսի նահանգի սահմանը, և Խփչաղի և Խազրի զօրքերը (Թաթարք և Զաչանք) տիրեցին Դէրբէնդի բերդին։ Նուշիրվանը շտապեց հասնել Դաղստանի սահմանը. զօրք ուղարկեց Խէյատլիներին պատժելու։ Հասնելով Դարբանդ, Նուշրվանը